Երանի ձեզ, եթէ այսուհետև Աստուած ձեզ փոքրում հաւատարիմ կգտնէ, առաջ քան ձեզ շատը յանձնէր, հաւատարիմ աշխարհիս դառնութեանց ու տհաճութեանց մէջ, բայց արժանիք ստանալու ժառանգութիւն երկնքում, հաւատարիմ կարճ ժամանակով, որ մենք կեանք ենք կոչում, բայց ժառանգողք յաւիտենական փառաց և երջանկութեանց մէջ: Ամէն:

(Բէրոէէ).

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ.

ԽԹ.

(Շարունակութիւն).

Սուրբ Գեղարդայ նման վիմափոր այս եկեղեցին իւր տեսակում հազուագիւտ և նշանաւոր երևոյթ կազմելով, տարաբաղդաբար չէ տալիս մեզ բաւականաչափ նիւթ իւր պատմական կեանքի մասին: Միակ տեղեկութիւնն, որ մեզ մատչելի է, մի հատիկ արձանագրութիւնն է, որ մասամբ գեղծուած մնացել է վերջին եկեղեցու հարաւային պատի վերայ: Ահա նորա պատճէնը.

«Կամաւն Աստուծոյ ի Հայրապետութեան Յակոբայ և քահանայապետութեան գաւառիս Տէր Սարգսի և ի տէրութեան իշխանաց «իշխանին Պռոշոյ և որդւոց նորին Պապաքին և Հասանայ և որդւոյ Էաչոյ և մօր նորին Պարոն, ես Մատթէոս վարդապետ կանգնեցի . . . . . և կատարեցի զեկեղեցիս ի բարեխաւսութիւն ինձ «և Պետրոսի և ծնողաց մերոց և պարոնաց մեր և ամենայն հաւատացելոց, որք մտանէք, Աստուած ողորմի ասէք մեզ և ձեզ եղիցի. «Թվին ՉԼԵ (735— 1286):»

Կան այլ ևս երկու արձանագրութիւն հիւսիսային պատի վերայ, բայց այնքան եղծուած, որ կարդալն անկարելի է:

Եւ այսպէս յիշեալ եկեղեցիները կատարել է կամ շինել է կամ փորել է տուել Մատթէոս վարդապետը, 1286 թուականին, այն է, երեք տարի Մարտիրոս գիւղը շինելուց յետոյ: Ահա մի տաժանելի և երկարամեայ, բայց հմտալից գործ, փորել ժայռի մէջ երկու ա-հագին եկեղեցի իւր գաւթով:

Մատթէոս վարդապետը լռում է թէ շինութեան վերայ գործ դրած ժամանակի որքանութեան և թէ եկեղեցեաց ինչ անուն կամ անուններ կրելու մասին: Սակայն անանուն եկեղեցիներից դէպի հա-րաւ, բաւականին հեռաւոր բլրի վերայ, մինչև այժմ ևս կանգուն մնացած մի մեծադիր խաչքարի արձանագրութիւնից իմանում ենք, որ նոյն Մատթէոս վարդապետը ՊՈՒՆ և ՄԴ տարի եկեղեցիների փորելը աւարտելուց առաջ, այն է 724—1275 թուին կանգնեցրել է այս արձանը: Ուրեմն տասն և մին, գուցէ և աւելի տարի, նա եղել է այդ տեղ և ուրեմն շատ հաւանական է, որ այդքան ժա-մանակ փորում էին եկեղեցիները:

Յիշեալ արձանագրութիւնն այս է.

«Կամաւն Աստուծոյ իշխանութեամբն Ամիր Հասանին, ես Մատ-թէոս վարդապետս կանգնեցի զնշանս ինձ և Պետրոսի և ծնողաց իմոց, որք երկրպագէք, Աստուած ողորմի նոցա. թվին ՉԻԴ (724—1275):

Վիմափոր եկեղեցիների անունն այժմեան մարտիրոսցիք կոչում են սուրբ Աստուածածին և տօնում են, ինչպէս այսօր, սուրբ Աստուածածնի օրը: Եկեղեցիների առաջ եղած մի քանի տապա-նաքարերից մինի վերայ գրած է. «այս է տապան Յոհաննէս բէգին, թվին ՉԽԷ (947—1498):

Տասն և հինգ քայլ դէպի հարաւ ցոյց տուին ճգնաւորի փէղ, այն է ժայռի մէջ փորած փոքրիկ բեմ, առաջը քարերով պատած, որ կայ և այժմ: Ցայտնի չէ որ ճգնաւորն և ե՞րբ է ճգնել այստեղ:

Մարտիրոսցիք շինել են Եագիւրդի ստորոտում, առուակի աջ ա-փում սուրբ Յոհաննէսի մատուռ, ուր կան կանգուն երկու խաչ-քար, որոնց արանքով տենդող (ջերմ) հիւանդն եթէ անցնի, իսկոյն կազատուի ցաւից . . . . :

Մելիք Ներսօն և ուրիշները նկատեցին ինձ թէ ի՞նչ կարիք կայ

այսքան երկար ժամանակ նայել, գննել այս քանդուած եկեղեցին, ընկած խաչքարերը, փլուած տները: Դորանց շինողները միանգամ շինել գնացել են այս աշխարհից: Իսկ դուք ամեն գալով գննում էք . . . . գնանք ահա այն կանանչ տեղը, ջրի վերայ, ծառերի ստուերում, ճաշենք, ուրախութիւն անենք, այսօր Աստուածածնի տօնն է, չգիտէք որ էլի ուրախութիւնն է լաւ՝ քան մամռապատ քարերը տակն ի վեր անելը: Մեզանից առաջ այս տեղ ապրողներն էլ սիրելիս են եղել ուտել, խմել: Տեսէք, նրանց կեանքի պատկերը նկարած է քարերի վերայ: Գնանք այն սուփրի վերայ, այն տեղ ձեզ ծանօթ աշուղներն երգում են, սազ են ածում:

Այսպիսի զուարճութեամբ և հեգնութեամբ համոզում էին ինձ գնալ, երբ ձանձրացած այդ տխուր, մեռեալ աշխարհի բեկորներից, ես առանց հրաւէրի անգամ յօժար էի գնալ և տեսնել իրական աշխարհի մի մասը:

Արդարև Քեշտաղցի աշուղ Ղազարը, Իմրան մականուամբ (գլ. Իթ) և նորա ընկերներն երգում էին: Ինձ դեռ ևս հեռուից տեսնելով՝ սկսեցին երգել հետևեալ մուխամբազը:

Էս օր ես մի գիւզալ տեսայ,
Խիստ նազանի ջան էր, սիրուն.
Ջան ասելով ջան լսելով
Կռնէս բռնեց տարաւ, սիրուն:
Տարաւ աղաքիս դրեց հաց
Հէնց ծիծաղեց խելքս գնաց,
Լոյս երեսին կամար կապած
Խալերն մարջան էր, սիրուն:
Խալեր ունէր եաղութ եաման,
Ես քեզ սիրեցի բէգուման,
Շովղայ (լոյս) կուտար արեգական
Երեսն աննման էր, սիրուն:
Երեսն աննման էր լուսով,
Ես քեզ սիրեցի հաւասով
Համ գինի տուր չինի թասով,

Համ հետ ինձ զովզ (ուրախութիւն)
արա՛, սիրուն։
Զովզ անելը սիրոյ բան էր,
Յետոյ սէրն միաբան էր,
Ոսկի թելերը քամին տանէր,
Թամամ զառ նշան էր, սիրուն։
Զառ նշանի թելերը թամամ
Ինքն էր սիրուն, օղն էր համամ,
Ծոցումը կար մի ջուխտ շամամ,
Ծաղկախառ բոստան էր, սիրուն։
Ծաղկախառ բոստան է թաղէն,
Բիլլա՛հ, էս էր խոսքիս սաղէն (ուղիղ)
Թաքլիֆ (հրաւէր) արաւ ինքն օթաղէն
Ղուլ (ծառայ) անելով տարաւ, սիրուն։
Ղուլ անելով խելքս տարաւ,
Գինի տուր, ինձ չի թող ծարաւ,
Ղուլ Թադէոս թաքլիֆ արաւ,
Էս էլ մի դովրան էր, սիրուն։

Առաջին անգամ լսելով ղուլ Թադէոսի անունը, ես բացաղրութիւն խնդրեցի աշուղներից, որոնք դժուարացան հարցս լուծել, ըստ որում ինքեանք չունէին ոչ մի տեղեկութիւն այս անձնաւորութեան վերայ։ Հասկանալի է թէ մեր ժողովրդի մէջ քանի այսպիսի ինքնաբոյս ժողովրդական բանաստեղծ երգիչներ կան, որոնց անձնաւորութիւնը և քերթուածքը կորչում են անհետք։

Փոքր կանգ առնելուց յետոյ աշուղները երգեցին հետևեալը։

«Արի՛, արի՛, նազ մի՛ արա՛, եա՛ր,
Աստուածդ կսիրաս.
Նեղացիր եմ, բռնի ձեռնէս, տար.
Աստուածդ, կսիրաս։
Քեզ խմայ էքի գցեցի, որ տիւ էլ քաղես բարը,
Բէ յմուրվաթ, ինչպէս զմրշար, իմ սրտիս զարկիր եարայ,
Տէրն ինք զսմաթ անի՝ խամբիւրենք մառմառ քարը,

Արի, իմ դարդիս տիւ արա՛ ճար, Աստուածդ կսիրաս։
Մանն սանէն դարդիննան հալաք ամ հալաք.
Աչքդ ունքդ կաժի մի քիւլլու ախշարք,
Մանն սանայ եօլլադրմ հիլ, դարչին, մրխակ,
Մեկնի, ա՛ռ ձեռդ, եար, Աստուածդ կսիրաս։
Ղաշլարն խան օլրի, չիրբտրը թախտայ,
Ասեցիմ մի պագ տուր, ասեց բէվախտ ա,
Ալլահվերդի դիէր՝ խալվաթ օթաղտայ
Ես տիւն ըլնենք, եար, Աստուածդ կսիրաս։

Երգիս հեղինակ Ալլահվերդու ով լինելն նոյնպէս մնաց անբացադրելի աշուղների կողմից։ Մատուցին բողբաշ կաւէ ամանների մէջ։ Ոյժներս փոքր ինչ կազդուրեցինք։ Սպասում էինք խորոված՝ բերելուն, որ փայտէ շամփուրների վերայ կարմրում էր։

—Ինչի՞ քո հեղինակութիւններից ոչինչ չես երգում, աշուղ Ղազար, դիմեցի ես Իմրանին։ Նա քիչ մտածեց, քթի տակ ժպտաց և պատասխանեց որ ինքը մի անգամ դարալագեազի Քարագլուխ գիւղում, աղբիւրի վերայ տեսել էր մի գեղեցիկ աչքերով կին և որի վերայ երգել է հետևեալը։

Ղոշմայ.

Մի հատ Սոնայ ես գեօլերի մէջն,
Կնմանէ ֆաֆուր ֆնջան աչքերդ.
Խօսքդ մարգարիտ ա, գին չունենայ,
Խելքս տարան լալ ու մարջան աչքերդ։
Մեզ մէ հոգի պէտք է տանք մեր Տէրին,
Օրօխկեմ քիրմանայ շալերն բերին.
Ինձ դրիր Քեարամի նման կրակն, էրիր,
Ինձի էրեց էդ ջուան ջան աչքերդ։
Աշըղ Իմրանին եմ, խօսքերս արիր եմ խամար,
Աչքերդ թուխ ի, ընքերդ կամար,
Ես քեզի կու սիրամ իմ ջանիս համար,
Զի քդնվում Հաղիրբէջան աչքերդ։

Թէպէտ մի առանձին ոգի և իմաստ չկային սոյն բանաստեղծութեան մէջ, սակայն ունկնդիրները ոգևորուեցին, գովեցին հեղինակի հանճարը, որով վստահութիւն տուին երգել իւր երկրորդ երգը։

Ղոշմայ.

Ասիմ, աղչի, խօսք տուար, խօսք առար,
Զինքդ ասիր՝ խա, ետ դառար՝ չէ, չէ։
Զինքդ խօսելով իմ ջանս առար,
Զինքդ ասիր՝ խա, ետ դառար՝ չէ, չէ։
Քիթումդ դրիր ես տիւ ոսկի թանան.
Խօսքերդ յարմարիր, տիւն արիր մահնան.
Ես իկեամ խամբիւրեմ քո սիպտակ չանան,
Զինքդ ասիր խա, ետ դառար՝ չէ, չէ։
Ինչ խրատ տամ, պահիր քո գուշին, (ականջ)
Անգաջ մի՛ տիր անգէտ սարխոշին.
Ես իկեամ պաչեմ քո կարմիր թուշին,
Զինքդ ասիր՝ խա՝ ետ դառար՝ չէ, չէ։
Աշըղ Իմրանին եմ, խօսքերս արիր՝ եմ խամար.
Երեսդ փափուկ ա, ճակատդ համավար.
Քեզ շատ սիրացի իմ ջանիս խամար,
Զինքդ ասիր՝ խա, ետ դառար՝ չէ, չէ։

Այս զուարճալի երգն ամենին գրաւեց. ամենքը՝ ծիծաղեցին, շնորհակալութիւն յայտնեցին երգիչ հեղինակին, որն իւր կողմից նոյնպէս շնորհակալ եղաւ և ապա բացատրեց, որ այսօր սուրբ Աստուածամօր և հետևաբար վիմափոր եկեղեցիների տօնն է, ուստի համեստօրէն թոյլտուութիւն էր խնդրում մի երգ երգելու Աստուածածնի վերայ։

Ղոշմայ։

Մէ նեղ տեղ ընկանք, չունենք մէ ումուդ,
Բալքեայ մեզի ընես եար՝ Աստուածածին,
Եղիսաբեթին ունէր մէ քաղցր որդին,
Որ թալեց, պահպանեց քար, Աստուածածին։

Տասներկու միլէթ աշքը դրէ քո լուսին,
Գաբրիէլ ողջոյն բերաւ Մարիամայ կուսին,
Բարիխօս ընիս մեզի՝ խետ բարիլուսին,
Դատաստանին անես ճար, Աստուածածին:
Աշըղ Իմրանի, աշքը մի՛ տի խալխի մէկ վարդին,
Ցոր երանու ջան ընկաւ անքեան մէ որթին,
Հայր Աբրահամ պէտք է կտրէր մէկ որդին,
Տէր Յիսուս ուղարկեց գառ, Աստուածածին:

Խորոված՝ կանաչի վերայ, բացօդեայ տեղում, արագահոս առուակի ափին ախորժակով ուտելուց յետոյ միմեանց շնորհակալութիւն արինք և ես վերադարձայ Մարտիրոս:

Մարտիրոսից դէպի հարաւ և արևմուտ կան հայ գիւղեր, Սէս, Կորադիզ (Ջալալեանի Հողոցիմ), Ադխաչ, Տիկին Ալմալու (գուցէ Օրբելեանի ցուցակի Դեկն գիւղը), Օղբին—Նախկին Աղոպէն և այլն, որոնք նոյնպէս Դարալագեազին կպատկանեն, բայց Նախիջևանի գաւառումն են: Կայ և մի աւերակ գիւղատեղի Լ.վ.ի.ս անունով:

Մարտիրոսից աստիճանաբար իջայ գառիվայր ճանապարհով դէպի Գեօմուր կամ Ախտայ—Ջուլ կամ Միջին Ախտայ տաճկաբնակ գիւղը: Այսուհետև գնելու տեղերն առանց բացառութեան տաճկաբնակ գիւղեր են՝ դասաւորուած Եազիւրդի հիւսիսային լանջում և ստորոտում, խորխորատ ձորերով և գուգընթաց բլուրներով, որոնք աստիճանաբար իջնում են դէպի Արփաչայի ձորը:

Ահա մտայ մի ձոր, որի խորքով ճանապարհը տանում է Փաշալուից մինչև իմ գնալու տեղը — Գեօմուր: Դա կոչւում է կէս հայ կէս Թուրք բառով Խաչդարասի, ըստ որում ահա առաջս բղխում է մի վճիտ աղբիւր և մօտը կանգնած է իւր պատուանդանի վերայ խաչքար: Իւր անունը ձորին ժառանգեցնող սոյն խաչքարի արձանագրութիւնն այս է: «Ի թվականիս Հայոց ՉԼԷ (737) իշխանութեան Պապաքին և Ամիր Հասանայ, ես Սարգիս և որդին իմ Պետրոս շինեցաք զաղբուրս և կանգնեցաք զխաչս . . .:» Վերջը թէպէտ փոքր ինչ եղծուած, բայց գլխաւոր միտքն այնուամենայնիւ հասկանալի է: Ձիուց իջայ, խմեցի այդ սառն աղբիւրից, օրհնեցի

Սարգսի և նորա որդի Պետրոսի պարզ յիշատակը, որ 600 տարի արթուն դէտ կանգնած, անցորդիս յիշեցնում է շինողների անունները:

Վերջապէս հասայ Գեօմուր:

Առաջինը որ գրաւում է ճանապարհորդի ուշքն իւր գեղեցկութեամբ, այդ կոփածոյ մատուռն է: Նա երկու մասից է բաղկացած: Արևելեան մասն իսկ մատուռն է հիւսիսային դռնով: Արևմտեան մասի պատի մէջ ագուցած է մի ահագին գեղեցկաքանդակ խաչարձան: Դորա համար և մատուռն ունի երկու տանիք սրբատաշ քարից, բարձրը՝ խաչքարի և ցածրը՝ մատրան գլխին: Ափսոս որ մատրան տանիքի հիւսիսային մասի ծածկաքարերը կողոպտուած են:

Արևմտեան կողմի խաչարձանը ունի իւր վերևը կիսաբոլորակ ծաղկահիւս սև քար, վրան գրած «կազմեցաւ խաչս ի բարեխաւսութիւն Աւտարշաւին Թոռան Խոյդանայ:» Իսկ խաչարձանի շուրջը գրած է, «ի թվ. հ. ՁԺԲ. (712) բարեպաշտ իշխանութեան Պռոշոյ Մխիթար, Արեւիկ որդի Խոյդանայ կանգնեցաք խաչս և մատուռն ի գուղն եկեղեցիս իսկ չկար շինած, զեկեղեցիս այս մեք շինեցաք մեր հալալ արդեմբք բազում աշխատութեամբ մեզ և ամուսնաց մերոց, որք կարդաք՝ յիշեցէք յաղաւթս:»

Նոյն պատի վերայ գրած է.

«Մխիթար Շնոհոր, աղբար քարդործ յիշեցէք:»

Խաչարձանի վայրի մասում, պատուանդանին մօտիկ գրուած է.

«Ի թվ. հ. ՁԺԲ (712) ի բարեպաշտ իշխանութեան Պռոշա ես Մխիթար ու Արևիկ որդի Խոյդանայ հմնարկեցաք զեկեղեցիս և զժամատունս շինեցաք և կանգնեցաք խաչս բազում աշխատութեամբ մեզ և ամուսնաց:»

Այս խաչարձանի ստորին պատուանդանի աջ կողմում պատկերացրած է մի ցուլ արձակ, չկապած. սորա յետևը մի հաստափոր գաւաթ: Իսկ ձախ կողմում ծաղկահիւս նկարի մէջ մի շղթայակապ առիւծ:

Անցնենք այժմ հարաւային երեսը: Այդ պատի վերայ, երկու արշինաչափ գետնից բարձր, մենք տեսնում ենք վայելչաքանդակ աբևի ժամացոյց կիսաշրջանից բաղկացած: Կեդրոնից մինչև շրջանա-

գիծը տարածւում են շառաւիղներ, իւրեանց ծայրերում ունենալով հետևեալ բելիեֆ տառերը. ա. բ. գ. դ. ե. զ. է. ը. թ, ժ. ի.:

Արևելեան պատի ճակատի վերայ, անմիջապէս առաստաղի տակը, երևում է մի բոլորակ ծաղկազարդ նկար, որից ստոր մեծ արծիւը թևերը կիսով չափ տարածած, ամուր բռնել է մագիլների մէջ ոլորուն եղջիւրներով խոյին: Արծուի աջ և ձախ կողմում, ծաղկանման հիւսուածների մէջ կանգնած են մի մի աղաւնէնման թռչուն:

Այժմ անցնենք չքնաղ մատրան հիւսիսային կողմը: Նայեցէք դրան վերը: Ծաղկահիւս խաչի շուրջը գրած է, «կազմեցաւ խաչս բարեխաւսութիւն Եղիսէ քահանայ, որք պատարաքէք յիշեցէք ի սուրբ (պ)ատարաքս ձե(ր):»

Մտնենք ներս: Մատրան ներսը շատ փոքր է, հազիւ ընդունէ երկու մարդ: Արևելեան պատում ունի մի փոքրիկ բեմ իւր կոտրած վէմ քարով և փոքրիկ լուսամտով: Հարաւային և հիւսիսային պատի մէջ մի մի փոքրիկ պատուհան: Արևմտեան պատի վերայ ներքուստ, երևում է այս արձանագրութիւնը: «Կամաւն Աստուծոյ (Հ)ասանս Պապաքի . . . Պռոշոյ պարոնութեամբ տուի շինագլուխն:»

Մատրան շուրջը կան տապանաքարեր և խաչքարեր: Վերջիններից մինի վերայ «Խաչս յիշատակ Հոգւոյ Հայրապետին և կնոջ Գիւլբաջին:»

Սորանով ահա վերջանում է այդ փոքրիկ՝ բայց վայելչագեղ մատրան թեթև նկարագրութիւնը, որի լուսանկար պատկերը զարդ կարող էր համարուել հնասէր անձի սեղանի վերայ:

Վերոգրեալ արձանագրութիւններից երևում է, որ մատուռը շինել են 712 հայոց կամ 1263 փրկչական թուականին, Պռոշ իշխանի օրով, Խոյդանայ որդիք Մխիթարը և Արևիկը: Նոքա շինել են նաև նոյն գիւղի եկեղեցին, որ առաջ չէ եղել: Սակայն պէտք է կարծել, որ այժմեան աւերակ եկեղեցին նորանց շինածը չէ, որպէս երևում է նորա արտաքին տեսքից:

Մատուռից դէպի հարաւ, մի քանի տասնեակ քայլ հեռու, շինած է եկեղեցին կրաշաղաղ, հասարակ, անտաշ քարից, ուր պատերի մէջ՝ տեղ տեղ երևում են աջ և ձախ հագցրած անարձանա-

գիր խաչքարեր և սորանց բեկորներ։ Զորս քառանկիւնի սիւներ պահում են նորա կամարակապ առաստաղը, որի մի մասը քանդուած է։ Հիւսիսային խորանի դրան վերի ճեղքուածով ես ինձ ձգեցի եկեղեցու մէջ, ըստ որում միակ հիւսիսային դուռը ծածկուած է հողակոյտով։ Ելնելս եղաւ վերջինից փորիս վերայ սողալով։ Եկեղեցու մէջ ծայրէ ի ծայր լցուած է անասնոց թրիքով և այնքան կուտակուած որ անվնաս կարելի է մտնել առաստաղից։ Եկեղեցին ունի ամբողջ բեմ, երկու խորան և աւազան։

Այս է այն բոլոր հայկական նշխարները այս գիւղում, ինչ որ կարելին էր գննութեան առնել և գրի անցնել, բայց տարաբաղդաբար, գիւղի անունը անկարելի եղաւ յայտագործել ոչ արձանագրութիւններից և ոչ պատմութիւնից։ Բայց ենթադրում եմ որ Օրբելեանի ցուցակի մէջ յիշած Գոմք կոչուած գիւղը գուցէ աշխարհիկ լեզուով եղել է Գոմեր, որ վերջին ժամանակի թուրքերի շրջանց վերայ դարձել է այժմ Գեօմուր։

Որքան դիւթիչ տեղ է այս Գեօմուրը։ Նա դրած է մի անդնդախոր ձորի արևմտեան բարձրութեան վերայ։ Ձորը ժայռերի միջով իւր առուակի հետ իջնում է Եազիւրդի ահռելի բարձրութեան հիւսիսային լանջից։ Ո՞րքան մաքուր օդ, թարմ մթնոլորտ։ Ի՞նչ սիզաւէտ ծաղկափթիթ բարձրաւանդակ տարածութիւններ և անօսր կարճահասակ անտառներ են սփռուում շրջակայքում։

Ձորի միւս, արևելեան, բարձրութեան վերայ, տեսէք, ինչ սոսկալի ժայռ է բարձրանում և իւր մերկ ճակատը բացած անդադար նայում է այս թշուառ, աղքատ, աղտոտ, գետնափոր գիւղի վերայ և նորա վայրենի, գետնախշտեայ, աւազակաբարոյ բնակիչների վերայ։

Ո՞ւր ես նախկին բնակիչ, ո՞ւր ես հայ ժողովուրդ, ո՞ւր ես անհետացել։ Գոնէ մի վայրկեան գլուխդ բարձրացրու և տես ում ես աւանդել տունդ, տեղդ, հանգստարանդ, մատուռդ, եկեղեցիդ։

Անշնորհ և ապօրինի ժառանգներդ տես ի՞նչպէս են պահում աւանդդ։ Նոքա տապալում են խաչարձաններդ, փշրում են տապանաքարերդ, քանդում են մատուռդ, ոչխար են պահում այն եկեղեցու մէջ, ուր «Խորհուրդ խորին» լսելիս՝ մոքով երկինքն էիր համբառնում։

Հրաժեշտ տալով սրտաճմլիկ Գեօմուրին, ես իջայ այդ բարձրութիւնից դէպի մեծ ձորը, ուր սայթաքելով և կանգնելով և նորից յառաջ գնալով՝ մեծ դժուարութեամբ նեղ, քարոտ ճանապարհով բարձրացայ դէպի Գեաբուտ գիւղը: Սա վերջին գիւղն է, որ այդքան բարձրացել է Եազիւրդի ժայռապատ լանջի վերայ, մի նեղ ձորի մէջ, ուր արևի առաւօտեան ճառագայթները շատ ուշ են հասնում: Ահա հայկական եկեղեցու և արձանաքարերի մնացորդք, որք շուտով կանհետանան այդ վայրենի ժողովրդի աւերիչ ձեռքում:

Իմ երևիլս մի հրաշք էր Գեաբուդի վայրենի բնակիչների համար: Ամեն ծակից և ճեղքից դուրս էին թափւում կիսամերկ կանայք, ցնցոտի կրող տղամարդիկ, մերկ երեխայք: Առանձին հետաքրքրութեամբ գննում էին իմ և ուղեկիցներիս ամեն մի չնչին շարժումը: Ես այս անգամ առաջին և վերջին անգամն եղայ այդ գիւղում: Ի՞նչ է եղել արդեօք այս գիւղի անունը հայոց ժամանակ: Գուցէ սա է Օրբելեանի ցուցակի Կապոյտ կոչուած գիւղը:

Եթէ ես մի քիչ ևս բարձրանամ, արդէն կհասնեմ Եազիւրդի գագաթն, ուր բնակւում են ամառը վրանաւոր մարդիկ և անվրան արջեր: Արևը թեքւում էր արևմտեան հորիզոնի վերայ և ես գնացած ճանապարհովս նորից իջայ Գեօմուրի ձորը, ապա թեքուեցի դէպի աջ, և գնացի Ջուլ գիւղը իջևանելու:

Գիւղի տանուտէրը պատրաստեց ինձ համար Օրուջի ցխապատ սենեակը: Օրուջը վայելուչ կերպով հիւրասիրեց և նորան ուռեցնելու նպատակով ուղեկիցներս կոչում էին Օրուջ բէյ: Խօսակցութեան միջոցին Օրուջ բէյը բերանից երբեմն թռցնում էր, որ ինքն իւր համագիւղացիներից առաւել հասկացող է, քաղաքավարի է, գիտէ ճանաչել Ֆարդկանց և այլն: Բանից դուրս եկաւ որ մեր հիւրասէր տանտէրը, Ռուսաստանը տեսնելով պարծեցողը, աքսորուած է եղել դէպի Ռուսաստան Շիրին Սուլթանի աւազակային խմբին մասնակցելու համար, 1853 թուին:

Առաւօտը դուրս եկայ սենեակից: Ի՞նչ աքանչելի տեղ է Ջուլը, արձակ, բաւականաչափ հարթ սարալանջ, անտառոտ, խոտաւէտ, ջրառատ, թէև քարոտ: Մի առատ առու սկիզբն առած մերձաւոր բազմաթիւ աղբիւրներից և անցնելով գիւղի մէջ մի փոքր, հնաժա-

մանակեայ, կամարաշէն քարեայ կամրջի տակից, արագութեամբ զառիվայրով փախչում է դէպի Արփաչայը:

Գիւղի արևելակողմում կանգնած է իւր տեսակների մէջ մի շատ մեծ եկեղեցի, 14 քայլ լայնութեամբ և 18 քայլ երկարութեամբ, սագաշէն, սրբատաշ քարից, չորս սրբատաշ սիւների վերայ ամրացած կամարաձև առաստաղով, սակայն մեծ մասն արդէն խոնարհուած: Ամբողջ մնացել է նորա միայն սեղանի կամարը և Հիւսիսային սիւների և պատի վերայ հաստատուած առաստաղը:

Տանիքի եզրների շրջապատ հաստաշուրթ քարերը և նորանց վերայ հիմնած անձրևաթոր քարեայ խողովները դեռ ևս ամբողջ մնում են: Եկեղեցին ունի բեմ, աւազան, երկու խորան, երեք դուռն, Հիւսիսայինը և Հարաւայինը դիտամբ պատով ծածկուած, իսկ արևմտեանը բաց, և վերջապէս եկեղեցու միջում մեծաքանակ թրիք:

Արտաքուստ, արևմտեան դռնից դէպի Հիւսիս արձանագրած է. «Շինեցաւ եկեղեցիս Թվին ՌՃԾԲ (1152),» մի թուական (1703) որ բաւականին մեզի մօտիկ, բայց և այնպէս մենք չգիտենք ոչ եկեղեցու անունը, ոչ գիւղի անունը և ոչինչ գիւղի մասին: Սակայն ենթադրութիւնս յառաջ մղելով գուցէ կարծեմ որ սա է Օրբելեանի ցուցակի երկու գիւղերից մինը՝ Ունջոռք կամ Աջողք:

Եկեղեցու շրջապատ տապանաքարերի մեծ մասը կամ անարձանագիր է և կամ եղծուած: Միայն մի քանիսի վերայ կարելի է կարդալ հետևեալը. «Այս է տապան Յուստասէին, հանգեաւ Թվին Ռ. Ճ. Հ. (1170):» Միւսի վերայ՝ Ռ. Ճ. Խ. (1140):

Եկեղեցու Հարաւային պատի մօտ եղել է փոքր, կամարածածք եկեղեցի, որ 10—15 տարի առաջ Փոռեցի (Էլի Փոռեցի) սարբիչ Կարապետը քանդել է գանձ գտնելու նպատակով, բայց չէ գտել: Եթէ հայը հայի եկեղեցին քանդում է, ապա ի՞նչ անի Թուրքը...:

Իմ երևիլը և հնութիւնները գննիլը բաւականաչափ տարօրինակ լուրերի տարածման առիթ եղաւ Ջուլի կիսավայրենի ժողովրդի մէջ: Ոմանք ասում էին թէ մի գուցէ եկեղեցին գննում են, որպէս զի հայերը բնակեցնեն այստեղ, ոմանք թէ երևի իշխանութիւնից հրաման է հնութիւնները հաշուեն, գրեն և դրութիւնն իմանան:

վերջին կարծիքից օգուտ քաղելով՝ ուղեկիցներս ծածուկ հաստատեցին այդ կարծիքը, հաւատացնելով որ Երևանի նահանգապետը յանձնել է իմ վերահսկողութեան բոլոր աւերակ վանքերը, եկեղեցիները, խաչարձանները, գերեզմանաքարերը և այլն, և վայ այն գիւղին, ուր այդպիսի մինը կպակասի:

Արդարև, իմ յաճախակի այցելութիւնն այս կամ այն հնութեանց համոզում էր շատերին որ յիշեալ կարծիքն ուղիղ լինի և այդ կարծիքը մասամբ ազատում էր աւերակների քարերը կողոպտումից, աւերելուց, քայքայելուց:

Ջուլից շարունակեցի ճանապարհս մինչև Մարաթիւզ թուրքաբնակ գիւղը: Ահա ձեզ բնութեան հրաշալի տեսարան: Գիւղի շուրջը բարձրանում են ժայռոտ լեռներ, իւրեանց վերայ ունենալով ամարային վրանաբնակ բնակիչներ: Ընդարձակօրէն բացուած է միայն արևմտեան մասը: Եթէ մենք, երբեմն (գլ. ԻԴ.) կանգնած Իլգիւրդի բլրի գագաթան վերայ, հիանում էինք դէպի արևելք ձգուող տեսարանով, այժմ ևս նոյնն է, միայն հակառակ ուղղութեամբ:

Ձեր աչքի առաջ բացւում է Արփաչայի ձորը իւր ահագին երկարութեամբ: Դուք տեսնում էք՝ թէ ինչպէս բազմաթիւ երկրորդական ձորեր և սորանց հետ զուգընթաց մերթ ժայռոտ լեռնաշղթաներ գետի երկու ափից ևս աստիճանաբար բարձրանում են դէպի հարաւ և հիւսիս և իւրեանց վերջին բարձրութիւններով կազմում են կարծես գետի հոսանքով երկու զուգահեռի երկարաձիգ գօտի և Մարաթիւզից նայելիս թոյլ չեն տալիս ձեզ տեսնել այլ տեղեր, բացի ճեղքուած, պատառուած ձորը, որի խորքով հոսում է աղմկալից Արփաչայը: Այո՛, դուք տեսնում էք այդ բոպէին միմիայն Արփաչայի աւազանը, ուրիշ ոչինչ:

Եթէ աքանչացած այդ տեսարանով դուք ձեզ անջատուած էք համարում աշխարհի մնացեալ մասերից, յանկարծ անդունդի և լեռների միջից բարձրացած՝ ցոյց է տալիս մեծ Մասիսն իւր գագաթի միմիայն ձիւնապատ մասն ուղիղ Ծուկրիկի (Կուրտկուլաղի) և Ամաղուի լերանց միջով:

Մարաթիւզում երևում են քարաշէն տների աւերակներ: Եկեղեցին կրաշաղաղ է, սագաշէն, 8 քայլ լայնութեամբ և 12 քայլ եր-

կայնութեամբ. բեմը սրբատաշ, իսկ միւս պատերը հասարակ քարից, մէջ առ մէջ ցանուցիր, վեր վայր խաչքարեր։ Կամարաձև առաստաղն երկու որմնակից սիւների վերայ բոլորը խոնարհուած, բացի սեղանի և դրան վերը։ Երկու աւանդատուն և արևմտեան դուռն հողով ծածկուած։ Արևելեան լուսամտի վերը պատկերանում է կանգուն արծիւ, աջ կողմում կարծես գիրք, իսկ ձախում՝ ցուլի գլուխ։

Բեմի վերայ կանգնած ձեր ոտերի տակ լսում էք աղբիւրի բարձր խոխոջիւնը։ Արդարև նա հնուց դիտմամբ անցրած է սեղանի տակով և դուրսը յորդութեամբ թափւում է քարեայ աւազանի մէջ ի վայելումն Մարաթիւզի անասնոց և անասնանման թուրք բնակիչների։

Գիւղից հիւսիս, բլուրի վերայ, հանգստարանում կան մի քանի կապոյտ տապանաքարեր, իւրաքանչիւրի մի անկիւնը ծակ, երևի քարշածելով բերելու համար մօտակայ քարահանքից։ Նոցանից միայն մինի վերայ ես տեսայ՝ «Այս է տապան Նազարեթիս։»

Մի տապանաքար իւր վերայ ներկայացնում է շատ հետաքրքիր պատկեր։ Ձիաւորը պինդ լարած ազեղից արձակում է նետը իւր առաջ փախչող այծեամի վերայ։ Միւս տղամարդը հետիոտ՝ ձախ ձեռքում բռնած է հաստագլուխ գաւազան և միւս ձեռքով որսորդի ձիու սանձը։ Երրորդը ծալապատիկ նստած սաղ է ածում, իսկ չորրորդը ջութակ։ Հինգերորդ տղամարդը ծնծղայք ձեռքին պարում է. վեցերորդը ձախ ձեռով գաւաթը և աջով թասը բռնած նոյնպէս պարում է։ Եօթներորդը սուլում է սրինգը։ Ութերորդը սորա առաջ պարում է և վերջապէս մի նազելի օրիորդ, կամ գուցէ հարս, երկայն հանդերձով, ձախ ձեռքը գօտկում, աջը վեր բարձրացրած, մասնակցում է պարահանդէսին։ Այդ մի ընտանիքի ամբողջ կենցաղավարական պատկեր է, որ քանդակիչը աշխատել է արտայայտել բոլորը մի քարի երեսում։

Հանգստարանի մօտ ընկած են ձիթահանքի երկու քար։ Իսկ գիւղից վեր, բաւականին հեռու դէպի արևելք, ժայռի տակ կայ մի բնական լայնանիստ աւազան, առաջև փոքրատարած բաց կողմը պատած։ Նախկին բնակիչ հայերը շրջակայ աղբիւրներից ամբա-

բում էին նորա մէջ մեծաքանակ ջուր և հարկաւոր ժամանակ դուրս թողնելով յիշեալ կրաշաղաղ պատի դռնից, ջրում էին իւրեանց անդաստանները: Այժմ պատը քանդուած է և ջրամբարը չէ գործածւում:

Ի՞նչ անուն տալիս են եղել հայերը Մարաթիւզ գիւղին որ անունից է աղջատուել ներկայ կոչումը: Թէև ես չգիտեմ այդ, բայց կարծում եմ թէ մի՞ գուցէ այժմեան Մարաթիւզը Օրբելեանի ցուցակի Մայրագուրքն է:

Մարաթիւզից բաւականաչափ հեռու Դամրչլար թրքաբնակ գիւղն է հայկական աւերակների վերայ: Երևում է մի պատած բակի արևելեան կողմում մեծ կոպիտ քար, վրան վեց հատ փորագրած խաչեր: Սոցանից մինի վերը գրած է «Թվ. ՉԽԲ. (942):» Միւսի տակը «սուրբ խաչ բարեխօս Աղաջանին:» Մի գուցէ այս բակը լինի եկեղեցին:

Հիւսիսակողմի հանգստարանում կան շատ տապանաքարեր եղծուած արձանագրութիւններով, բայց բոլորի վերայ կենցաղական պատկերներ: Այդ տեղ, մինի վերայ տղամարդն ածում է ջութակ և նորա առաջ չորս հարս կամ օրիորդ ձեռք ձեռքի տուած շղթայած պար են բռնել: Միւս քարի վերայ ձիաւոր զրահաւորուած նետ և անեղով, այծեամ, ցուլի վերայ յարձակուած առիւծ: Կայ և մի խոյաձև տապանաքար, վրան փոքրիկ խաչեր, բայց արձանագրութիւնն եղծուած:

Գիւղումը կան հնուց շինած երկու աղբիւր իւրեանց քարեայ աւազաններով, որից մինը կոտրած ու անպէտք: Դամրչլարի նախկին անունը բոլորովին անյայտ է:

Դամրչլարից Զրախլու գնալու համար ես թեքուեցայ փոքր ինչ ցած, դէպի Արփաչայը և հիւսիսակողմի ուղղութեամբ գնացի յիշեալ գիւղը, ուր աւերուած եկեղեցուց մնացել են միայն հիմնապատերը հազիւ երկու արշին բարձրութեան:

Զրաղլուից Թարփ գիւղը գնալիս նկատեցի մի բլուրի վերայ մի արձանագիր խաչքար և տների աւերակներ: Տեղը չունի անուն:

Թարփ գիւղն ունի մի քանի թուրք անպիտան բնակիչներ, ամէն բանի ծոյլ, իսկ գողութեան համար ժիր: Գիշերները գնում են

Գնդեվազ գիւղը՝ սեխ, ձմերուկ, վարունգ գողանալու: Ամբողջ գիւղում մի քանի ծառ անգամ չեն տնկում, որ գոնէ ստուեր ունենան: Ընդամենը ունին երեք ուռի ծառ: Գիւղի մօտ երևում են տների աւերակներ, տապանաքարեր, այլ ևս ոչինչ:

Թարփից յետոյ գալիս է Թերփ գիւղն, որի տեղն ընդարձակ է և յարմար, բայց բնակիչներն անպիտան: Հայոց եկեղեցուց մնացել են միայն հիմնապատերը, իսկ միւս մասերն ընկնելով, կազմել են ահագին քարակոյտ: Հարաւային աւանդատան պատի մէջ չորս խաչքարեր կան, հաւանականաբար ուրիշ տեղից բերած: Մինը նոցանից գեղեցկաքանդակ ուռուցիկ տառերով գրած է. «Սուրբ խաչ բարեխաւս Նասիպին, ով կարդէ ի Քրիստոս Թվ. ՂԷ (97):» Թուականի առաջին տառը գուցէ կոտրած է: Երկրորդի վերայ «Կանգնեցի խաչս Հոգւոյ Խոյդեղին տղայ աւրաւք ի Քրիստոս փոխեցի, յիշեցէք Թվ. ՋԲՅ. (912)» և այլն:

Սոյն այս խորանի վերը մի կանգուն տապանաքարի վերայ երկուցուլ կատաղաբար մարտնչում են իրար հետ: Կայ և արձանագրութիւն, բայց պատի մէջ ծածկուած: Եկեղեցու քարակոյտերի մէջ ցրուած տապանաքարերի հայկական թուականները վերաբերում են 902, 1013 և 1113 տարիներին: Կայ մի խոյանման տապանաքար հետևեալ գրութեամբ «Այս է Հանգիստ Ուջալբէգին:»

Եկեղեցուց դուրս, հիւսիսային կողմում, կիսից ճեղքուած մի տապանաքար ներկայացնում է հետևեալ հետաքրքիր տեսարանը: Վազում են վայրենի ոչխար և այծ, երկու բարակներ վազում են նորանց յետևից, իսկ որսորդը ձիու վրայից լարել է անեղը և նետը, ապա ձի, աղաւնի, ոչխար, թռչուն ծառի ճիւղի վերայ, մատակարարը գաւաթը ձեռին կանգնած: Պարոնը ծալապատիկ նստած, թագը գլխին, աջ ձեռքում բազէն, ձախում բաժակ: Վերջն այս արձանագրութիւնը «Այս է Հանգիստ Սաւլթանբէգին, որ կիսաւրեայ ի Քրիստոս փոխեցաւ. յիշեցէք ի Քրիստոս, Թվիս ՊՅԱ. (881):

Եկեղեցու շուրջը կան բազմաթիւ տապանաքարեր և խաչարձաններ կանգնած, թեքուած, գլորուած, պառկած, ջարդուած, կոտրուած, արձանագրով, առանց արձանագրի, եղծուած և այլն,

և այլն, մի խօսքով այստեղ երևում է ամբողջ մեռելոց տշխարհ։ Երևում է որ Թերփում եղել է բազմութիւն մարդկանց։

Ի՞նչ ասեմ արդեօք Թերփի հին անուան մասին։ Միթէ կսխալու�մ եթէ ասեմ, որ այժմեան Թերփը Օրբելեանի ցուցակի Դերբն կարող է լինել։

Թերփի և Զայքեանդի միջև կայ մի կործանուած փոքրիկ եկեղեցի, շուրջը խաչքարեր։

Շօպէնը (երես 816) յիշում է որ Թերփից եօթը վերստ հեռու կայ կապարի հանք, որ երբեմն մշակում էին հայերը։ Հետախուզութիւնից յայտնուել է, որ 40 ֆունտ հանքը բովանդակում է իւր մէջ 22 ֆունտ կապար և մի զոլոտնիկ արծաթ։ Ես պէտք է խոստովանիմ որ ոչ տեսած եմ և ոչ լսած յիշեալ հանքի մասին։ Շօպէնը գուցէ սխալմամբ խառնում է Թերփը Փիմիշխանէի հետ, ուր արդարև կայ այդպիսի հանք։

Քեօշպեադ գիւղն, ուր գնացի Թերփից, սիրուն և հիանալի դիրք ունի։ Սորա թուրք բնակիչները գաղթած են այստեղ 25 տարի առաջ Զայքեանդ գիւղից։ 1874—5 թուականին բնակիչները քանդել են եկեղեցին և քարերը գործադրել են տան և պարսպի շինութեան վերայ։ Մի գուցէ այս գիւղը լինի Օրբելեանի ցուցակի Քաշիմարգ գիւղը։

Քեօշպագից անցայ Լէյլիկաչան գիւղը։ Սորա անուան ծագման համար աւանդում են, որ Ջուլեցի Խուդօն փախցրել է այդ գիւղից Լէյլի անուն օրիորդին, որը նորից փախել է իւր փախցնողի ձեռքից։ Բնակիչներն եկած են այստեղ Թերփից 16—20 տարի առաջ։

Այստեղ երևում են տների աւերակներ, ձիթահանք, բլուրի վերայ տապանաքարեր, բայց գիւղի հին անունն անյայտ։

Վերջապէս հասայ Փիմիշխանայ, որ գետեղուած է մի օրօրոցաձև բլուրի վերայ, ունելով երկու կողմից խոր ձոր իւրեանց առուակներով։ Հայոց սագաշէն կրապատ եկեղեցուց երևում են հիւսիսային պատը և աւանդատունը և սեղանը։

Արևելեան բարձր բլուրի վերայ, հանդստարանում կան դեռ ևս կանգուն խաչարձաններ, մեծ մասն առանց գրութեան։ Սակայն մինի վերայ կայ «Ես Գրիգորէս կանգնեցի զխաչս յիշատակ հաւր իմ

Աղբայրանոյդ և մաւր իմ Գոհարին և աղբաւր իմ Բէկին ի թվ. ՁԾԸ. (758)՝ ով կարդաք յաղաւթս յիշեցէք։»

Հարաւային ձորի առուակից վեր դէպի հիւսիս՝ գիւղից երկու երեք վերստ հեռու սարալանջի վերայ կան մինչև ԷՐԷՈՒՆ հատ հին և նոր փորած հորեր։ Հներն արդէն լցուած են հողով՝ իսկ նորերը խոր են և ուղղահայեաց։ Սոքա բովանդակում են իւրեանց խորքերում կապարախառն արծաթ՝ որից մի բեկոր՝ 40 ֆունտի ծանրութեամբ դրած է իմ հնագիտական—հանքաբանական ժողովածուի մէջ։

Հորերն ապացոյց են՝ որ հնումն և նորումն այդ տեղ մշակւում էին արծաթի և կապարի հանքերը և առաջինից յառաջացել է գիւղի այժմեան Գիւմիւշ—խանայ անունը։ Հաւանական է ենթադրել որ Սիւնեաց աշխարհի պատմութեան մէջ յիշատակած «Փողահանքն՝ այս է։ Ստեփաննոս Օրբելեանն իւր պատմութեան մէջ յիշում է Սմբատ իշխանի մասին՝ թէ «էառ (Սմբատ) զԵղեգիս և զամենայն գաւառն Վայոց ձորոյ՝ զ Փ ո ղ ա հ ա ն ս ն և այլն։»

Գիւղում և նրա շրջակայքում չէ երևում արծաթի մշակութեան յարմար շինութիւնների՝ գործարանների մնացորդ. չկայ նաև անտառ վառելափայտի համար յիշեալ գործարաններում՝ կամ գուցէ մի ժամանակ եղել է։ Եթէ արդարև նախկին Փողահանքն արդեան Գիւմիւշխանան է՝ ուրեմն չէ երևում այժմ Սուրբ Սահակ եկեղեցու հետքն՝ որ ԺԳ դարում Ստեփաննոս եպիսկոպոս Օրբելեանն ընծայեց Ամաղուի Նորավանքին։

Վերջին շարք գիւղերը՝ Գեօմուրից մինչև Գիւմիւշխանայ՝ դասաւորուած են Եազիւրդի և նորա հիւսիսային շարունակութեան արևմտահիւսիսային լանջում՝ իսկ նոյն լերան արևելեան լանջը պատկանում է Շուշու գաւառին։

Գիւմիւշխանայից դէպի հիւսիս՝ 8 վերստաչափ հեռաւորութեան վերայ՝ Արփաչայի ափում դրած է Գնդեվազ գիւղն՝ որն արդէն նկարագրուած է Նկատողութեանցս ԻԱ. գլխում։ Ուրեմն սորանով վերջանում է Վայոց ձորի բոլոր գիւղերի նկարագրութիւնը։ Վերջանում է և իմ ճանապարհորդութիւնը սկսած Ալէքսանդրոպոլից Երևան՝ Նախիջևան՝ Ագուլիս և ապա Վայոց ձորի ամէն մի գիւղ մինչև ամենավերջին՝ Գիւմիւշխանայ գիւղը։ Սորա հետ ևս վերջա-

նում է և «ճանապարհորդական նկատողութիւնք» աշխատութիւնս:

Սակայն հետևեալ գլխում մի քանի խօսք ևս նուիրելով Վայոց ձորի հայ ժողովրդի գաղթականութեան տնտեսագիտութեան, և կեանքի այլ և այլ երևոյթներին, կաւարտեմ վերջնականապէս սոյն աշխատութիւնս:

(Շարունակելի է)

ՓԱՋԲԵՐՈՒՆԻ.

ԽՈՐԵՆԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ [1]

Գ.

Նորից Չորրորդ գրքի մասին.—Խորենացու մի նոր ձեռագիր գրուած Բաղէշի Ամրդոլու վանքում.—Այդ ձեռագրի յիշատակարանները.—Խորեն. Պատմութեան գրքերի թիւը մի յիշատակարանում.—«Թարգմանութեան» օրինակներ այդ ձեռագրի նշիշներից.

Երկրորդ յաւելուած. Խորենացու չորրորդ գրքի գոյութեան վկայութիւններից մէկն էլ է Բաղէշու Ամրդոլու վանքում գտնուող Խորենացու իբր թէ ամբողջ ձեռագիրը, հանդերձ չորրորդ գրքով: Այս մասին յիշում է Հ. Ալիշան, 40 տարի առաջ, իսկ Հ. Սրուանձտեան այդ վանքի գրադարանի մասին տալիս է մեզ հետևեալ հետաքրքրական ծանօթութիւնը. «Համբաւաւոր է սոյն մատենադարան, ցոյց չեն տար այլոց. դուրս եղածները միայն տեսայ ես» 2): Մեզ անհնարին է անշուշտ ստուգել որ և է ճանապարհով այդ՝ Ամրդոլու վանքի չորրորդ գրքի լինել կամ չլինելը, բայց դրա փոխարէն տալիս ենք ընթերցողներին նոյն այդ վանքում գրուած Խորենացու մի այլ ձեռագրի յիշատակարանները: Այս վերջին ձեռագիրը չգիտենք որչափ ժամանակից ի վեր գտնուում է Մայր Աթոռիս գրադարանում, 2463 թուահամարով: Ինքը կա-

---

1) Տես «Արարատ» 1891, փետրուար:

2) «Թորոս Աղբար» Բ. մասն, եր. 262, կ. Պոլիս, 1884: